



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 171 «__28__»__02__2018 թ.

Արձանագրություն N 171

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2018թ-ի փետրվարի 28-ի նիստի**

Նիստին ներկա էին գիտխորհրդի 28 (քսանութ) անդամներից 21-ը:

Օրակարգ

1. Դոկտորական ատենախոսության թեմայի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
2. Թեկնածուական ատենախոսության թեմաների և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
3. Գիտական և գիտամեթոդական աշխատությունների հրատարակության երաշխավորության հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
4. Դոցենտի կոչման դիմումների քննարկում և մրցույցի անցկացում /զեկ.՝ գիտ. քարտուղար Ա. Իսրայելյան/:
5. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել ք.գ.թ. Ա. Ալեքսանյանի դոկտորական ատենախոսության թեման՝ **«Ժողովրդավարության մակարդակի վերլուծության տեսական և մեթոդական հիմքերը»** վերնագրով:
2. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեմաները.
ա/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ Ա. Սահակյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ **«ԶԼՄ-ների դերը ՀՀ ներքաղաքական գործընթացներում 2008-2018թթ.»**», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարկարովին:

բ/ Ռուս-հայկական (սլավոնական) համալսարանի ասպիրանտ Գ. Նազարեթյանի «Եվրասիական տնտեսական միության էներգետիկ և տրանսպորտային միջանցքները Հայաստանի ինտեգրացիոն մարտահրավերների համատեքստում», ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.թ., Վահե Դավթյանին:

3. Երաշխավորել հրատարակության՝

ա/ Պ.գ.թ. Ա. Մանվելյանի «**Էներգետիկ աշխարաքաղաքականությունը և անվտանգությունը միջազգային հարաբերությունների արդի համակարգում**» վերնագրով ուսումնամեթոդական աշխատանքը:

4. Ընտրել՝ ա/ հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար պ.գ.թ. Ռ. Կարապետյանի և ի.գ.թ. Ս. Մանուկյանի անունները.

բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 28 անդամներից քվեարկությանը մասնակցել են 21-ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝

Ռոման Կարապետյան-21 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Սահակ Մանուկյան-21 կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Խորհրդի քարտուղար, դոցենտ

Ա. Իսրայելյան

Իսկականի հետ ճիշտ է՝